Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպման մեթոդները»

Ուսուցիչ՝ Լիանա Կոստանյան

Մալիշկայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ Աիդա Խալաթյան

Եղեգնաձոր 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ 4

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 10

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մայրենի լեզվի զարգացմանը նպաստում է ընթերցանությունը: Ա.Բահաթրյանի կարծիքով՝ մայրենի լեզվի ուսուցման ճիշտ ու արդյունավետ միջոցներով է պայմանավորված երեխայի՝ մայրենի լեզվի զարգացման աստիճանը: Մանկավարժը լեզվի զարգացման հիմքում դնում էր լեզվի ու մտածողության անխզելի կապը: Այդ պատճառով մայրենի լեզվի զարգացումը պետք էր իրագործել երկու ճանապարհով՝ մտածելու և խոսելու: Կարդալով մարդը ոչ միայն բառեր է սովորում, այլև մտածում է:

Բահաթրյանը մայրենի լեզվի ուսուցման մեջ բացառիկ կարևոր տեղ էր հատկացնում աշակերտների բանավոր խոսքի մշակմանը՝ այն համարելով մայրենի լեզվի ուսուցման հիմքը: Բանավոր խոսքի մշակման և զարգացման համար որպես կարևոր միջոցներ առաջարկել է ինքնուրույն ընթերցանության հետ կապված բացատրություններ և մեկնաբանություններ:

Ա. Տեր-Գրիգորյանը, Ջ. Գյուլամիրյանը, Ս. Գյուլբուդաղյանը և ուրիշներ ևս «Մայրենիի» դասընթացում կարևոր դեր են հատկացրել ընթերցանության ժամերին: Ըստ Ա. Տեր-Գրիգորյանի՝ ընթերցանությունը ոչ միայն նպաստում է կապակցված խոսքի զարգացմանը, այլև ճանաչողական գիտելիքների հարստացմանն ու աշակերտների դաստիարակությանը: Մայրենիի տարրական դասընթացի բաղադրիչներից մեկի՝ ինքնուրույն ընթերցանության հիմնանպատակը սովորողների ինքնուրույն ընթերցանության կարողության ձևավորումն է:

Հարկ է նկատել, որ ինքնուրույն աշխատանք կատարելու հմտությունը զարգանում է անհատական և խմբային ուսումնական գործունեության բազմազան տեսակների կիրառմամբ, որոնք նրանք կատարում են տանը և դպրոցում: Այդ ընթացքում ուսուցչի հիմնական գործառույթը սովորողների ինքնուրույն ճանաչողական գործառույթների կառավարումն է:

Կրտսեր դպրոցական տարիքը հատկապես այն շրջանն է, երբ երեխան անվերապահորեն հավատում է այն ամենին, ինչ ասում են մեծերը, կամ ինչ գրված է գրքերում: Երեխաների բարոյական պատկերացումները, որոնք նա ստանում է ընտանիքում, մանկավարժական գործունեության միջոցով դառնում են համոզմունք: Այսպես՝ սովորողի մոտ ձևավորվում են բարոյական համոզմունքներն ու ճանաչողական ունակությունները:

Ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպման մեթոդները

Մայրենիի դասավանդման ընթացքում ուսուցողական նպատակներից բացի լուծվում են նաև դաստիարակչական լուրջ խնդիրներ գեղագիտական ճաշակի, ազնվության, աշխատասիրության, ճշտապահության, բարոյական մի շարք լավագույն հատկանիշների դաստիարակում և այլն: Այդ աշխատանքն իրականացվում է հիմնականում երկու ուղղությամբ՝ բուն դասագործընթացում (ուսուցմանը զուգընթաց) և արտադասարանային ընթերցանության միջոցով:

«Արտադասարանային» ընթերցանություն նշանակում է ոչ դասարանային, այսինքն՝ տնային ընթերցանություն, ինչպես նաև ընթերցանություն ոչ դասագրքից: Հենց դա է երեխայի դեպի գեղարվեստական գրականություն տանող ճանապարհը:

Այդ իմաստով, կարծում ենք, որ այսօր առկա են բազմաթիվ թերացումներ: Շատերից ենք լսում «Այսօր երեխան չի սիրում կարդալ» արտահայտությունը: **Իսկ ինչո՞ւ:**

Չի կարելի ժխտել, որ այս առումով իրենց վնասակար դերն ունեն թե՛ համացանցը, թե՛ հեռուսատեսությունը, թե՛ մյուս տեղեկատվական ու կապի միջոցները: Սակայն, կարծում եմ, ուսուցչի կողմից կիրառված ճիշտ պահանջները, աշխատաձևերն ու մեթոդները լուծելի կդարձնեն այս դժվարին (անլուծելի թվացող) խնդիրները, նկատելի ձևով կբարձրացնեն ընթերցասիրությունն ու ընթերցողական կարողությունների որակը:

Կարդալու հմտությունների զարգացման լավագույն միջոց է **ինքնուրույն ընթերցանությունը:** Լավ կարդալու համար պետք է շատ կարդալ: Երեխաներին գրքին «կապել» աշխատանքը պետք է հնարավորինս շուտ սկսել (սկսած գրաճանաչողության շրջանից): Որպես միջոց՝ արդյունավետ է արտադասարանային աշխատանքի ճիշտ կազմակերպումը, որ առաջադրված նյութերը խիստ հետաքրքրեն երեխային, և նա կապվի գրքին:

Առաջին դասարանի հետայբենական շրջանից սկսած՝ արտադասարանային ընթերցանությունը նպատակահարմար է անցկացնել փոքր չափաբաժիներով: Տանն է հանձնարարվում փոքր ծավալով նյութերի ընթերցումը (այդ աշխատանքը կարելի է դարձնել գրեթե ամենօրյա), որոնք պետք է դասարանում համապատասխան վերլուծության ենթարկվեն: Սկզբնական շրջանում ինքնուրույն ընթերցանություն կազմակերպելիս, որպես հնարք, կարելի է օգտագործել **բարձրաձայն կարդալը** (նույնիսկ կարելի է ձայնագրել սեփական խոսքը՝ բարձրաձայն կարդալիս, ինչը հնարավորություն կտա լսել և գնահատել այն, բարելավել նրա արտահայտչականությունը):

Ուսուցման մեթոդիկան հիմնված է «կարդալ՝ նշանակում է ստեղծագործության իմաստը հասկանալ» սկզբունքի վրա: Ուստի կարդալու կարողության ձևավորման համար մեթոդիկայի մեջ կարևորվել է և կարևորվում է **բացատրական ընթերցանության մեթոդը,** որը դիդակտիկական ձևերի ու միջոցների մի ամբողջ մեթոդական համակարգ է:

Բացատրական ընթերցանության մեթոդի հիմնական բաղադրամասերն են՝ զրույցը, բնագրի ընթերցումը, բառային աշխատանքը, բովանդակության վերատադրումը և տրամաբանական երզրակացությունը (ամփոփումը), առանց որոնց ոչ մի նյութի դասարանային մշակում կատարյալ լինել չի կարող:

Ինչպես նշվեց արդեն, ընթերցանությունը լուծում է և՛ ուսուցողական, և՛ դաստիարակչական խնդիրներ:

Մեթոդական առումով կառուցողականությունն օգնում է հասկանալ, թե ինչպե՞ս է զարգանում ճանաչողականությունը՝ ուսուցչի վարպետության և աշակերտի հետ համագործակցության միջոցով: Պետք է կիրառվեն աշակերտակենտրոն մոտեցումներ, խրախուսվեն համագործակցությունը, նախաձեռնությունը, ստեղծագործական մտածողությունը: Այս տեսանկյունից արդյունավետ է **ուսուցման փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդը**, քանի որ այն ապահովում է սովորողների մասնակցությունը իրենց իսկ ուսուցումը կազմակերպելիս:

Համագործակցային ուսումնառության բոլոր մեթոդների համար էլ ընդհանուր է հետևյալ գաղափարը. աշակերտները համագործակցում են միասին սովորելու նպատակով և պատասխանատու են ինչպես իրենց, այնպես էլ թիմակիցների ուսումնառության համար:

Կան մի շարք մեթոդներ, որոնք ներառում են այն մեթոդների բաղադրիչներ, ինտեգրում մի շարք մեթոդական հնարներ՝ ընդհանուր նպատակին ծառայելու համար:

Ինտերակտիվ մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր չկան: Ցանկացած դասարան, դասապրոցես եզակի է, անկրկնելի: Ուսուցիչն այն հաճախ պետք է հարմարեցնի եզակի իրավիճակների:

Քանի որ ուսումնական մեթոդների և մեթոդական հնարների արդյունավետությունը մեծապես կախված է երկխոսության որակից, և երկխոսությունը չափազանց կարևոր է ժամանակակից կրթամշակութային կյանքում և դրված է համամարդկային բոլոր արժեքների ընկալման և փոխանակման հիմքում,

ապա նրա (երկխոսության) ուսուցման կարևորագույն ուղիներից մեկը **բանավեճն է**: Այդ պատճառով այս մեթոդն իր տարատեսակներով («Դեբատ», «Խաղ-բանավեճ», «Անկյուններ» և այլն) բավականին կարևորում է համագործակցային ուսուցման մեթոդների մեծ խմբում և մեծապես կարող է նպաստել երեխաների մտքերը ճիշտ ձևակերպելուն և արտահայտելուն, սեփական տեսակետը պաշտպանելու կարողության զարգացմանը, թեմայի կայուն յուրացմանը, բառապաշարի հարստացմանն ու ակտիվացմանը:

Ուսումնական բանավեճը մտքերի, դրույթների, կարծիքների նպատակամետ և որոշակիորեն կարգավորված փոխանակությունն է՝ հանուն ճշմարտության որոնման:

Բանավեճի ճիշտ կազմակերպումը պայմանավորված է ճիշտ հարցադրումներով: Հարցերը քննարկումը խթանելու նպատակ ունեն, ուստի կարևորվում է հարցերի բնույթը և դրանց ճիշտ կիրառումը: Ճիշտ հարցադրումները խիստ կարևորվում են ուսուցչի ողջ ուսուցման գործընթացում: Դրանց ճիշտ կիրառումը կարող է մեծ հետաքրքրություն և ակտիվություն առաջացնել երեխաների մեջ: Հարցումների թելադրանքով աշակերտները սկսում են (փորձում են) կառուցել լուրջ, իմաստավորված գաղափարներ, անել եզրահանգումներ (նույնիսկ ստեղծել նոր գաղափարներ) և ինքնուրույն վերլուծություններ:

Կրտսեր դպրոցում դասարանային և ինքնուրույն ընթերցանության կարողությունը ձեռք է բերում երկու հիմնական գործառույթ.

1. կարդալը՝ որպես ընթերցանության դասերի պահանջ,
2. դասավանդման բանալի մյուս առարկաներն ուսումնասիրելիս[1]:

Մայրենիի դասագրքերում տրված նյութերի դասարանական ընթերցումը կատարվում է տարբեր մեթոդներով, տարրական դասարաններում՝ հիմնականում բացատրական ընթերցանության կամ ԽԻԿ համակարգով, իսկ ուսուցման միջին օղակում՝ ինքնուրույն ընթերցանության մեթոդներով: Դրանց խնդիրներն ու նպատակները տարբեր են, և ուսուցման տարբեր օղակներում տարբեր նպատակներ են դնում ուսուցչի առջև:

1. Ստեղծագործություններն ուսումնասիրելիս անհրաժեշտ է երեխաներին օգնել՝ հասկանալու ընթերցած ստեղծագործության մեջ կերտված կերպարների գործողությունները, հոգեբանությունը. նրանց զգացմունքային ապրումները սերտորեն

[1]**Թ. Թադևոսյան,** Ինքնուրույն ընթերցանությունը՝ կարդալու կարողությունների ձևավորման և զարգացման արդյունավետ միջոց, «Նախաշավիղ»,6. 2015, էջ 3:

առնչվում են ինչպես աշակերտի ինքնաճանաչման ու ինքնաիրացման ոլորտներին, այնպես էլ խոսքի ու մտածողության զարգացմանը:

2. Ստեղծագործությունների գործող անձանց էությունը ներգործում է աշակերտների վրա: Այդ ստեղծագործությունների մտքի ըմբռնման գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի արտահայտիչ ընթերցմամբ: Առաջին ընթերցանության ժամանակ, որպեսզի երեխաները լիովին ըմբռնեն ստեղծագործության գաղափարը, ուսուցիչն ինքը պիտի հասկացած լինի ստեղծագործության բովանդակությունը, հերոսների արարքների տրամաբանությունը, և դրանք աշակերտներին ներկայացնի՝ հաղորդելով իր ապրումները, վարակելով երեխաներին իր տրամադրությամբ:

3. Գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցումը կարևորվում է նաև անձի զարգացման, նրա արժեքային համակարգի ձևավորման գործում ունեցած դերով:

Կրտսեր դպրոցում՝ մայրենի լեզվի ուսուցման առաջին օղակում, իրականացվում են հետևյալ խնդիրները, որոնք անմիջականորեն առնչվում են դասարանային ու ինքնուրույն ընթերցանությանը:

1. Երեխաների մեջ մշակվում ու զարգացվում է կարդալու տեխնիկան՝ իր որակական բոլոր հատկանիշներով:
2. Գործնական կերպով աշակերտները սովորում են մայրենի լեզուն՝ ընթերցանության միջոցով հարստացնելով իրենց բառապաշարը:
3. Աշակերտները կարողանում են ստանալ նաև Հայաստանի, նրա քաղաքների, բնության, հայ ժողովրդի պատմության, սովորույթների, ինչպես նաև բազմաթիվ աշխարհաճանաչողական գիտելիքներ, որոնք զարգացնում են նրանց գեղագիտական ճաշակը, մտածողությունը, մասնավորապես խոսքը:
4. Իրականացվում է երեխաների բարոյական, գեղագիտական և գաղափարական դաստիարակություն[2]:

Ստեղծագործությունները, որոնք ընթերցվում են, այնպես պետք է ուսուցանել, որ դրանք երեխաներին ոչ միայն մայրենի լեզվով կարդալ և պատմել սովորեցնեն, այլև զարգացնեն նրանց բանավոր խոսքը, ստեղծագործությունները հասկանալու,

[2]**Ա. Տեր-Գրիգորյան**, Հայոց լեզվի մեթոդիկա, էջ 140:

դրանք վերլուծելու, նրա ենթաշերտերի մեջ թափանցելու, լավը վատից, չարը բարուց տարբերելու, համապատասխան դատողություններ անելու միջոցով: Դասարանային ընթերցանության հիմնական նպատակը գործնական կերպով մայրենի լեզվի ուսուցումն է: Դասարանային ընթերցանության ժամանակ կարող են դիտարկվել և' բառերի ու բառակապակցությունների, և' նախադասությունների, և' բնագրերի ընթերցումը: Բառ-նախադասություն-տեքստ ընթերցման շղթան նպատակ ունի նպաստելու բանավոր խոսքի զարգացմանը, որի վրա էլ հենվում են աշակերտների լեզվական ու ճանաչողական հմտությունները:

Դասարանային ընթերցանության հետ կապված ինքնուրույն աշխատանքներից առավել գործադրելի են համարվում հետևյալները.

1. Առաջադրված գեղարվեստական գրականության ինքնուրույն ընթերցում՝ ուսուցչի հետ միասին նրա վրա տարված բացատրական աշխատանքից հետո: Այդ աշխատանքը կարող է կատարվել ինչպես կարդալու որակի բարձրացման ու բովանդակության վերարտադրման, այնպես էլ արտահայտիչ ընթերցանության նախապատրաստման կամ տարատեսակ լեզվական առաջադրանքների կատարման նպատակով:
2. Առաջադրված նյութերի ինքնուրույն ընթերցում տանը կամ դասարանում՝ դասարանում ուսուցչի հետ կատարած բացատրական աշխատանքից հետո՝ դասարանում ընթերցանության նյութը կարդալուն նախապատրաստելուն կամ կարդացածի բովանդակությունը պատմելու համար:
3. Գեղեցիկ դարձվածքների ու կապակցությունների առանձնացում՝ բնագրի ինքնուրույն կարդալու միջոցով, դրանց բացատրման ու մեկնաբանման կամ պատմելու ընթացքում դրանք օգտագործելու նպատակով:
4. Բանաստեղծությունների, առակների և արձակ ստեղծագործությունների առանձին հատվածներ անգիր անել:
5. Կազմակերպել դերային ընթերցանություն, որը կնպաստի աշակերտների համագործակցային կարողությունների արմրապնդմանը[3]:

---

[3] **Ա. Տեր-Գրիգորյան,** Արտադասարանային ընթերցանությունը տարրական դասարաններում, մեթոդական ցուցումներ, Երևան, 1973, էջ 24-25:

Նման ինքնուրույն աշխատանքները կարևոր նշանակություն ունեն ընթերցանության ճիշտ կազմակերպման ու արդյունավետ անցկացման գործում, որովհետև երեխաներին բազմակողմանիորեն և աստիճանաբար նախապատրաստում են այդ պատասխանատու ու հետաքրքրական աշխատանքի համար: Նաև հարկ է նկատել, որ ինքնուրույն ընթերցանության կազմակերպման ուղղությամբ հիմնական աշխատանքը մնում է դպրոցի վրա, որովհետև այն սերտորեն կապվում է ուսումնական աշխատանքին ու դասարանային ընթերցանությանը: Դիտարկենք դասարանային ընթերցանության ժամանակակից մոդելը:

Այսպիսով՝ դասարանային ընթերցանությունը երեխային հնարավորություն է ընձեռում հարստացնելու ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնելու տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները: Իսկ «հասկանալով ընթերցանությունն ակտիվացնում է մտածողական գործընթացները և կարևոր նախապայման դառնում երեխաների արդյունավետ ուսուցման և ուսումնառության համար»[4]:

Դասարանային ընթերցանության ժամերին սովորողների բարոյական դաստիարակության խնդիրների լուծման գլխավոր պայմանը սովորողների՝ գրական ստեղծագործությունը խորությամբ հասկանալու, վերլուծելու կարողությունն է: Մայրենի լեզվի դասերին աշակերտները ուսուցչի ղեկավարությամբ կարդում են գրական ստեղծագործություններ: Ստեղծագործական գեղագիտական և բարոյական արժեքներն ընկալելու համար անհրաժեշտ է, որ.

- խորհեն ընթերցածի շուրջ,
- ապրումակցեն հերոսներին,
- գնահատեն նրանց արարքները,
- իմաստավորեն նրանց խնդիրները,
- համեմատեն իրենց կյանքը գրական կերպարների կյանքի հետ,
- ձգտեն կատարել իրենց ընկալած բարոյական նորմերին համապատասխան արարքներ:

Ինքնուրույն կամ արտադասարանային ընթերցանությունն անմիջականորեն կապված է դասարանային ընթերցանությանը և լրացնում է նրան: Լավ կարդալու համար անհրաժեշտ է շատ կարդալ, ուստի ինքնուրույն ընթերցանության նպատակ-

[4]**Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան**, Ընթերցանության դասաժամերի դերն ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում, «Նախաշավիղ», 2006, N6, էջ 34:

ներից մեկը երեխայի մոտ ընթերցանության նկատմամբ հակվածությունն առաջացնել է: Դրա համար շատ կարևոր է, որ հանձնարարվող ստեղծագործությունները, գրքերը լինեն հետաքրքրական, որ կարողանան կլանել աշակերտին: Ինքնուրույն կամ արտադասարանական ընթերցանությունը կարող է իրականացվել բազմապիսի ձևերով (խմբակների, էքսկուրսիաների, գեղարվեստական երեկոների անցկացման ժամանակ և այլն): Դրանց կիրառումը հնարավորություն է տալիս ուսուցչին՝ ապահովելու դաստիարակության ու ուսուցման փոխներգործությունը, որի շնորհիվ տեղի է ունենում անձնավորության այնքան կարևոր գծի զարգացումը, ինչպիսին ճանաչողական հետաքրքրությունն է:

Ա. Տեր-Գրիգորյանը առանձնացնում է դասարանային ու արտադասարանային կամ ինքնուրույն ընթերցանությունների հետևյալ տեսակները՝

1.էքսկուրսիաների, կինոնկարների, ներկայացումների դիտումներ,

2.երեխաների համար կազմակերպվող գեղարվեստական ընթերցումներ՝ ուսուցչի կամ լավ կարդացող երեխաների կողմից,

3. ինքնուրույն աշխատանք գրքի վրա,

4. ինքնուրույն աշխատանք մամուլի՝ թերթերի, ամսագրերի, նկարազարդ հանդեսների վրա,

5. երեխաների ուժերով կամ նրանց համար կազմակերպված երեկույթներ կամ ցերեկույթներ, գրական-երաժշտական հանդեսներ, հանդիպումներ նշանավոր անձանց հետ, հարց ու պատասխաններ, մրցույթներ և այլն[5]:

[5] **Ա. Տեր-Գրիգորյան,** Արտադասարանային ընթերցանությունը տարրական դասարաններում, մեթոդական ցուցումներ, Երևան, 1973, էջ 13:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դասարանային ընթերցանությունը հիմք է դառնում ինքնուրույն ընթերցանության համար, որը, զարգացնելով հասկանալով, ճիշտ և սահուն, արտահայտիչ կարդալու կարողությունները, կատարում է նաև այլ գործառույթներ.

Այսպիսով՝ մեր հետազոտությունը թույլ տվեց գալու հետևյալ եզրակացություն-ների.

1. Մայրենիի դասընթացում կարևորագույն դեր է կատարում ինքնուրույն ընթերցանության բաղադրիչը. այն ունի սովորողի ընթերցողական կարողությունները զարգացնելու և ընթերցասիրություն ձևավորելու կարևոր նշանակություն:

2. Ինքնուրույն ընթերցանությունը մեծապես նպաստում է սովորողի ճանաչո-ղական գիտելիքների հարստացման և արժեհամակարգի ձևավորման գործընթացին, ուստի ինքնուրույն ընթերցանության համար նախատեսված ստեղծագործությունների վերլուծությունն ու քննարկումը պետք է կազմակերպվի նաև այդ նպատակի առավելագույն արդյունավետ իրականացման հաշվառմամբ:

3. Ճանաչողական գիտելիքների հարստացման արդյունավետ կազմակերպման համար կարևոր է ինքնուրույն և դասարանային ընթերցանությունների միջև կապի ստեղծումը. եթե ինքնուրույն ընթերցանության համար հանձնարարվող գրակա-նությունն իր ճանաչողական կամ դաստիարակչական բովանդակությամբ անմիջա-կանորեն առնչվում է արդեն ուսումնասիրված կամ զուգահեռ ուսումնասիրվող թեմաների հետ, լրացնում է դրանք, ապա լրացուցիչ հնարավորություն է ընձեռնվում ուսուցչին՝ առավել ընդգրկուն և խորը դարձնելու քննության առնված հարցերի ու-սուցման գործընթացը:

4. Ինքնուրույն ընթերցանությունը նպաստում է նաև աշակերտի բառապաշարի հարստացմանն ու կապակցված խոսք կառուցելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980
2. Ա. Տեր-Գրիգորյան - <<Գործնական աշխատանքները բացատրական ընթերցանության դասերին >> ,1963 թ
3. Ա. Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան, մայրենիի մեթոդական ձեռնարկ, Երևան 2007թ.
4. Գալստյան Ա., Խարազյան Ռ. և ուրիշներ, Ինքնուրույն ընթերցանություն 2-րդ, 3-րդ, 4-րդ դասարանների համար, Էդիթ Պրինտ, Երևան, 2010:
5. Գյուլամիրյան Ջ., <<Մայրենի լեզու>> դասագրքի մեթոդական ուղեցույց, երևան, 2004:
6. Գյուլամիրյան Ջ., Խաղալով սովորենք, Զանգակ 97, Երևան, 2009:
7. Գյուլամիրյան Ջ., Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, 1998:
8. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006:
9. Գյուլամիրյան Ջ., Տարրական դասարաններում արտադասարանական ընթերցանության կազմակերպման խնդիրները և մեթոդները, <<Նախաշավիղ>>, 2001, N 1:
10. Խ . Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ.5, Երևան, 1950,
11. Խաչատրյան Ս., Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում, «Նախաշավիղ» հանդես, Երևան, 1.2013:
12. Ջ. Գյուլամիրյան, Տարրական դասարաններում արտադասարանական ընթերցանության կազմակերպման խնդիրները և մեթոդները, «Նախաշավիղ», 2001, N1
13. Տեր-Գրիգորյան Ա., Ընթերցանության մեթոդիկա, Երևան, 1978:

14. Տեր-Գրիգորյան Ա., Արտադասարանային ընթերցանությունը տարրական դասարաններում, մեթոդական ցուցումներ, Երևան, 1973:

15. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980: